ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/2

«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱ»
ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի և կարգապահական հանձնաժողովի 17.05.2011թ. ընդլայնված նիստի

Մասնակցությամբ՝
Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Խաչատուր Ղահրամանյանի
Հանձնաժողովի անդամներ՝ Գագիկ Բարխուդարյանի, Աղասի Արսենյանի, Արման Սարգսյանի, Սոֆյա Դավթյան

Դիտորդ խորհրդի նախագահ՝ Հրանտ Ղամբարյանի
Խորհրդի անդամներ՝ Լևոն Պետրոսյանի, Ռուբեն Խալաթյանի, Վահագն Ավագյանի

Օրակարգում

Սնանկության գործերով կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի քննարկումը:

Նիստին չէին ներկայացել դիմումատու՝ Արմեն Մկրտչյանը և «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ռոբերտ Մարգարյանը, սակայն վերջինս 13.05.2011թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ գրասենյակ էր ներկայացրել պատասխան՝ Արմեն Մկրտչյանի ներկայացրած դիմումի կապակցությամբ, ինչպես նաև ներկայացրել էր որոշ ապացույցներ:

Կարգապահական հանձնաժողովի անդամները որոշեցին 17.05.2011թ. նշանակված նիստը անցկացնել դիմումատու՝ Արմեն Մկրտչյանի և «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ռոբերտ Մարգարյանի բացակայությամբ:
Կարգապահական հանձնաժողովի նախագահ Խ.Ղահրամանյանը հրապարակեց «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարչի ներկայացրած պատասխանն և հանձնաժողովի անդամների հետազոտմանը ներկայացրեց կառավարչի կողմից ներկայացրած փաստաթղթերը:

Գնահատելով գործում առկա ապացույցները կարգապահական հանձնաժողովը հաստատված է համարել հետևյալ փաստերը.

1. «Արմանս» ՍՊԸ-ի սնանկության վարույթի շրջանակներում Դիմումատու Արմեն Մկրտչյանը հանդիսանում է **«Արմանս» ՍՊԸ-ի հիմնադիր և տնօրեն,**
2. «Արմանս» ՍՊԸ-ի սնանկության վարույթի շրջանակներում Դիմումատու Արմեն Մկրտչյանը հանդիսանում է **երրորդ անձ գրավատու «Հայպեռլիտ» ՍՊԸ տնօրեն,**
3. «Արմանս» ՍՊԸ-ի և գրավով ապահովված պարտատեր «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի միջև կնքված վարկային պայմանագրի շրջանակներում դ իմումատու Արմեն Մկրտչյանը հանդիսանում է **«Կոնվերս բանկ» ՓԲԸ նկատմամբ երաշխավոր,**
4. «Արմանս» ՍՊԸ-ի սնանկության վարույթ շրջանակներում, «Արմանս» ՍՊԸ նկատմամբ, որպես ֆիզիկական անձ Արմեն Մկրտչյանը ներկայացրել է պահանջ՝ 24.600.000 ՀՀ դրամ գումարի չափով պարտատեր գրանցվելու վերաբերյալ հիմքում դնելով **«Արմանս» ՍՊԸ-ի և իր միջև կնքված /անհատույց/ պահանջի իրավունքը զիջելու մասին** պայմանագիրը:

5. Նշված պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագիրը կառավարչի հայցապահանջի հիման վրա դատարանի կողմից ճանաչվել է անվավեր և Դիմումատու Արմեն Մկրտչյանի պահանջը չի ընդգրկվել «Արմանս» ՍՊԸ-ի պարտատերերի ցուցակում:

Կարգապահական հանձնաժողովի իրավական հիմնավորումները.
Համաձայն «Սնանկության մասին» 48-րդ հոդվածի 1-ին կետի պարտապանի ղեկավար մարմինները պարտավոր են կառավարչին տրամադրել պարտապանի գործունեության և միջոցների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և հավաստի տեղեկություններ, այդ թվում պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդած երեք տարվա ընթացքում պարտապանի գույքի օտարման կամ ակտիվների այլ ձևով նվազեցման մասին:

Կարգապահական հանձնաժողովը արձանագրում է, որ Արմեն Մկրտչյանը, որպես պարտապան ընկերության տնօրեն չի կատարել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները, այն է չի հայտնել հավաստի տեղեկություններ և չի տրամադրել ընկերության հիմնադիր, հաշվապահական և այլ փաստաթղթերը, ինչի արդյունքում «Արման» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչը ստիպված է եղել գործել վարույթում առկա բազմաթիվ խորընդոտների պայմաններում:

Արմեն Մկրտչյանը, միաժամանակ հանդիսանալով «Հայպեռլիտ» ՍՊԸ տնօրենը, գույքագրման ժամանակ կառավարչին թեպետ ցույց է տվել որոշակի գույք, սակայն չի ներկայացրել գույքի վերաբերյալ փաստաթղթերը, չի բացել ավտոմեքենայի դուռը, որի արդյունքում հնարավոր կլիներ գույքագրման մասնակիցների կողմից գույքագրվող գույքը նույնականացնել:

Հանձնաժողովի անդամների կողմից նշվեց այն փաստը, որ դեռ 03.05.2011թ. կարգապահական հանձնաժողովի նիստի ժամանակ Արմեն Մկրտչյանին ուղղված այն հարցին, թե ինչու վերջինս որպես պարտապան «Արմաս» ՍՊԸ-ի տնօրեն չի կատարել իր պարտականությունը, այն է կառավարչին չի հանձնել ընկերության փաստաթղթերը և որպես «Հայպեռլիտ» ՍՊԸ-ի տնօրեն ինչու չի ապահովել գույքագրման ժամանակ գույքերի պատշաճ հանձնումը, վերջինս պատասխանել է, որ որ մոտակա երկու օրվա ընթացքում նա կարող է ապահովել դա:

Դիտորդ խորհրդի անդամներ Ա.Չիտչյանը և Լ.Պետրոսյանը 03.05.2011թ. նիստին նշել էին որ դիմումատու՝ Արմեն Մկրտչյանը ոչ թե մոտակա երկու օրվա ընթացքում պետք է ապահովի գույքագրման պատշաճ կատարումը, այլ կառավարչի առաջին իսկ նշանակված գույքագրման ժամանակ, որը Արմեն Մկրտչյանի կողմից չի կատարվել:

Նշվածից հետո Արմեն Մկրտչյանը հայտնել էր, որ կատարված հարցադրումները չեն վերաբերվում բուն դիմումին:

Հանձնաժողովի անդամները արձանագրում են այն փաստը, որ քննվող դիմումի շրջանակներում պետք է դիտարկվի սնանկության վարույթի ընթացքում կառավարչի գործողությունները , ուստի դիմումատու՝ Արմեն Մկրտչյանի առարկություններն այդ կապակցությամբ անհիմն են:

Հանձնաժողովի անդամները արձանագրում են նաև այն փաստը, որ դիմումատուն լինելով նույն պարտապան ընկերության հիմնադիր և տնօրեն, երրորդ անձ գրավատու «Հայպեռլիտ» ՍՊԸ տնօրեն երբևիցե չի վիճարկել կառավարչի գործողությունները դատարանում և նշվածի մասին տեղեկություններ դիմողը կարգապահական հանձնաժողով չի ներկայացրել:

Հանձնաժողովի անդամները արձանագրում են նաև այն փաստը, որ կարգապահական վարույթի ընթացքում կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Դիմումատու Ա. Մկրտչյանը կարգապահական հանձնաժողովին չի ներկայացրել որևէ հիմնավոր ապացույց այն մասին, որ «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ռոբերտ Մարգարյանը իրեն պատճառել է նյութական և բարոյական վնաս:

Որպես նշված հանգամանքի թույլատրելի և վերաբերելի ապացույց կարող էր հանդիսանալ դատական ակտը՝ «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Արամի Մարգարյանի կողմից դիմումատուին նյութական և բարոյական վնաս պատճառելու մասին:

Դիմումատուն հանձնաժողովին չի ներկայացրել նաև որևէ հիմնավոր ապացույց այն մասին, որ «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Մարգարյանը գործել է ի շահ իրեն, իսկ կարգապահական վարույթի ընթացքում կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Հանձնաժողովը արձանագրում է , որ «Արմաս» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ռոբերտ Մարգարյանը, ընդհակառակը, չունենալով «Արմաս» ՍՊԸ-ին վերաբերող հաշվապահական և այլ փաստաթղթեր, իրեն ընձեռնված հնարավորությունների սահմաններում ձեռնարկել է իրենից կախված բոլոր հնարավոր միջոցները ` դիմումատու Արմեն Մկրտչյանի`/որպես պարտապանի ղեկավար և որպես երրորդ անձ գրավատու կազմակերպության ղեկավար/ ստեղծած խորընդոտները հաղթահարելու ուղղությամբ:

Կառավարիչը իր լիազորությունների շրջանակում, օրենքով սահմանված կարգով ձեռնարկել և ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները պարտապանի գույքը հայտնաբերելու, այն հետագայում վաճառելու և գոյացած միջոցների հաշվին պարտատերերի պահանջների բավարարելու համար:

Ինչ վերաբերվում է դիմումատու Արմեն Մկրտչյանի պահաջին, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի միջոցով իրեն տրամադրելու «Արմաս» ՍՊԸ-ի վարկային պայմանագրով գրավադրված գույքի գույքագրման ակտի՝ կառավարչի և բանկի կողմից կատարված գրառումներով օրինակը, ապա հանձնաժողովը, ինչպես նաև դիտորդ խորհուրդը այդպիսի իրավասություն չունեն: Դիմումատու Ա. Մկրտչյանը զրկված չէ սնանկության վրույթի շրջանակներում վարույթում առկա նյութերին ծանոթանալու, ինչպես նաև պատճեներ վերցնելու իրավունքից:

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի Կանոնների 1-ին կետի՝ Սնանկության գործով կառավարչի մասնագիտական գործունեությունը իրականացնելիս պարտավոր է ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ, պահպանել Ինքնակարգավորվող կազմակերպության Կանոնադրությունը և ներքին կանոնակարգը, ինչպես նաև, կատարել Ինքնակարգավորվող կազմակերպության վարչական մարմինների որոշումները: Սնանկության գործով կառավարչի մասնագիտական գործունեություն հասկացողության տակ ենթադրվում է Ինքնակարգավորվող կազմակերպության գործունեությունը, որպես սնանկության գործով կառավարչի «Սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված և դրան համապատասխան, սնանկության ընթացակարգի իրականացումը:

Կանոնների 2-րդ կետի համաձայն՝ Կառավարիչը մասնագիտական գործունեությունը իրականացնում է հիմնվելով անկախության և անաչառության, բարեխղճության և խելամտության սկզբունքների վրա:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց

«Արմաս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ռոբերտ Մարգարյանը գործել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում՝ բարեխղճորեն կատարելով ստանձնած պարտավորությունները և «ՍԳԿԿ» ԻԿԿ կանոնադրության, ինչպես նաև մասնագիտական վարքագծի էթիկայի Կանոնների խախտում թույլ չի տվել:

Դիտորդ խորհրդի նախագահ Հ. Ղամբարյան

Կարգապահական հանձնաժողովի Նախագահ Խ.Ղահրամանյան